

2006
III

ՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳ՝ ՃԵՄԱՐԱՆԻ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺՆԻ

Ստորին դասարանն ընդունուելու համար.

Վարդապետ
Երեւանի եղբայրացի Մայր Աթոռ

1916

13088

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ
Տ. Տ. Գ Է Ո Ր Գ Ա Յ Ե.
ՍՐԲԱԶՆԱԿՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
Ամենայն Հայոց

13088

Ս. ԷԶՄԻՆԺՆԻ ԳԷՈՐԳԵՆՆ ՀՈՒՆԵՐՈՐ
ՈՒՄԱՐԱՆ

Դպրոցական բաժնի ստորին դասարանը
ընդունում են ոչ անցի քան 14 տարեկան
(չլրացած) պատանիներ, քննութիւն տալով
հետեւեալ ծրագրով:

1. ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
Ա. Հին ՈՒՍ

Նահապետների շրջան (Աբրահամ, Իսահակ,
Յակոբ). առաջնորդների շրջան (Մովսէս, Յե-
սու). դատաւորների շրջան (Գէղէոն, Սամփսոն,
Հեղի, Սամուէլ). թագաւորների շրջան (Սաուլ,
Դաւիթ, Սողոմոն). անկման շրջան (Յերոբոամ,
Ռորովամ, Եղիա, Բաբելոնի գերութիւն):

Բ. ՆՈՐ ՈՒՍ

1) Քրիստոսի կեանքը՝ — Ծնունդ, Տաճարին
ընծայում, Մկրտութիւն, Առաքեալների ըն-
տրութիւն, Քարոզութիւն Քարոզութիւնը Նա-
զարէթում, Հեռան քարոզը և ինն երանութիւն):
Առակները (փարիսեցու և մաքսաւորի, Անա-
ռակ որդու, Սողոմոնի սամարացու, Այրի կնոջ
լուծման, Կորուսեալ ոչխարի և դրամի. Սեր-
միացանի, Որոմի և այլու մշակների): Մուտք
երուսաղէմ, Ռանալուայ, Խաչելութիւն, թաղում,
Յարութիւն, Համբարձում:



2) Յովհաննէս Մկրտչի կեանքը (Ծնունդ, Բարոյութիւն, Մահ):

Գ. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Հոգեգալուստ, եօթը սարկաւագների ընտրութիւն, եթովպացի ներքինին, Կունեկիոսի զարձը, Ստեփանոսի մահը, Սաւուղի զարձը և Պողոսը Դամասկոսում. Առաքելական առաջին, եկրորդ և երրորդ ուղևորութիւնները. Պօղոսի դատը, Հոովմ դնայը և մահը:

Չեռնարկ. Ս. ք. Սահակեանի կազմած դասագիրքը՝ «Սրբազան պատմութիւն—Հին ու խոս և Նոր ուխտ»:

Դ. ՀԱՒԱՏԱՄՔ ԱՄԲՈՂՁ

Ե. ԱՂՕԹՔ.—Տէրունաեան աղօթք բացատրութեամբ: Շարական Խորհուրդ մեծ և սքանչելի (3 տ.):

2. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (աշխարհաբար)

ա. Քերականութիւն I. Ամբողջ ստուգաբանութիւն (Էաիմոլոգիա). Չայնաւոր և բաղաձայն հնչիւններ. տառեր երկբարբառներ, վանկեր. կետադրութիւն և առողանութեան նշաններ. ձայնաւոր և բաղաձայն հիւնչիւններ ուղղագրութիւն և տողադարձի կանոններ: Բառակազմութիւն. պարզ, բարդ և ածանցական բառեր. արմատ. նախածանց և վերջածանց մասնիկներ: Չայնաւորների կորուսման և վաւարման կանոններ: Հոմանիշ և նոյնանիշ բառեր: Բառերի տ.

նումներ: Գոյական անուն. յոգնակի և եզակի. յատուկ և հասարակ անուններ. կանոնաւոր և անկանոն հոլովում: Յօդեր: Ածական անուն և տեսակները: Յատկութեան աստիճաններ: Թուական անուն և տեսակները: Դերանուն, տեսակներ և հոլովում: Բայ. կանոնաւոր և անկանոն խոնարհումներ. դէմք. ժամանակ. եղանակ և սեռ: Դերբայներ: Մակբայ և տեսակներ: Նախադրութիւն: Շաղկապ և տեսակները՝ ստորագոյտական և համադասական: Չայնարկութիւն:

Շարահիւսութիւն (Սինտաքսիս): Պարզ նախադասութիւն. ենթակայ, ստորոգեալ, ինդիքների և պարագաներ. կոչական անուն. միջանկեալ բառեր: Գոյականի լրացումներ՝ յատկացուցիչ, բացայայտիչ: Հարցների և նախադրութիւնների կիրառութիւն: Համաձայնութիւն ենթակայի և բայի, բայցայայտչի և բացայայտեալի: Անենթակայ նախադասութիւններ: Համադասական նախադասութիւններ: Միջանկեալ նախադասութիւն. ուղղակի խօսքեր և ուղղակի խօսքերի վերածումն անուղղակի խօսքերի՝ Բարդ նախադասութիւններ, պիսաւոր և երկրորդական նախադասութիւններ: Կետադրութեան և առողանութեան նշանների զործածութիւն:

Չեռնարկներ՝ Մ. Աբեղեան—«Տարբական քերականութիւն»—երրորդ տպագր.: Պալատեան—«Քերականութիւն մայրենի լեզուի»:

բ. Գրաւոր: Թելադրութիւն, փոխադրութիւն և շարադրութիւն մատչելի նիւթերի մասին՝ աշակերտի անգիր արածից, կարդացածիժ, լսածից և տեսածից:

գ. Բանաւոր: Ազատ կարգալ առողջանութեամբ և պատմել. հատուածը բաժանել մասերի. կազմել կարգացածի ուրուագիծը. անգիր իմանալ ընտիր հատուածներ՝ արձակ և ոտանաւոր, արեւելեան և արեւմտեան բարբառներով, առնուազն 6 կտոր:

Ձեռնարկներ՝ Մ. Աբեղեանի—«Ուղղագրական յօդուածներ»: Վանցեանի—«Հայ հեղինակներ»: Աղայեանի, Ահարոնեանի, Յ. Թումանեանի և Փափագեանի—«Հայ գրողներ» I հատոր: Նազարեանի—«Ընտիր հատուածներ»:

3. ՌՈՒՍԱՅ ԼԵԶՈՒ

Պարտադիր ուսումնականներին համար:

ա. Քերականութիւն: Ամբողջ ստուգաբանութիւն (էտիմոլոգեա), բացի բառակազմութիւնից: Հնչիւններ, ձայնաւոր, բաղաձայն և կիսաձայն. տառեր, երկբարբառներ, վանկեր. տողադարձի կանոններ. շեշտ. կետադրական նշաններ: Գոյական անուն և տեսակներ, յոգնակի և եզակի: Կանոնաւոր և անկանոն հոլովումներ: Ածական անուն և տեսակները. հոլովում. համեմատութիւն: Թուական անուն և տեսակները. հոլովում: Դերանուն, տեսակները և հոլովում: Բայ. կանոնաւոր և անկանոն խոնարհումներ. գէմք, ժամանակ, եղանակ և սեռ. բայերի կերպերը (виды). բայածական, դերբայ: Նախադրութիւն: Մակբայ և տեսակները: Շաղկապ և տեսակները: Զայնարկութիւն: Բառերի ուղղագրութիւն:

Շարահիւսութիւն (սինտաքսիս): Պարզ նախադասութիւն. ենթակայ, ստորոգեալ, խնդիրներ և պարագայական բառեր: Միջանկեալ բառեր. յատկացուցիչ և բացայայտիչ բառեր. հոլովների և նախադրութիւնների կիրառութիւն. համաձայնութիւն նախադասութեան մասերի: Գլխաւոր և երկրորդական նախադասութիւն:

Ձեռնարկներ՝ Преображенский А.—Элементарная грамматика. Смирновский П. Элементарная грамматика.

բ. Գրաւոր. Թելագրութիւն. անգիր սովորածի գրութիւն. գրաւոր պատասխաններ տուած հարցերին. փոխադրութիւն կարճ յօդուածների:

գ. Բանաւոր. Ազատ կարգալ առողջանութեամբ և շեշտաբանութեամբ և պատմել. յօդուածը բաժանել բաղադրիչ մասերի. անգիր գիտենալ ընտիր հատուածներ՝—արձակ և ոտանաւոր, առնուազն 4 կտոր:

Ձեռնարկներ՝ Корханиди—Образцовые писатели—для млад. и среднихъ клас. Мартыновский—Русские писатели, томъ I.—Максимовъ—Русская грамматика съ большимъ количествомъ письменныхъ упражненій.

4. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ա. Մաթեմատիկական եւ Ֆիզիկական մաս.

Հորիզոն և աշխարհի կողմերը. երկրի ձևը. երկրի շարժումը: Գլորուս, բևեռներ, առանցք, միջօրէական, հասարակած և զուգահեռական

շրջագծեր. աշխարհադրական լայնություն և երկարություն. գծախներ: Յամաքը և ջուրը: Յամաքի բաժանումը: Յամաքի մակերևոյթը: Լեռներ, լեռնագագաթներ և հրաբուխներ. հովիտներ և ձորեր. հարթություններ, կղզիներ, թերակղզիներ, հրուանդան, պարանոց: Ովկիանոսներ, ծովեր, ծոցեր, ջրանցքներ, գետեր, լճեր, սառցարան. հոսանքներ, տեղաաւութիւն և մակընթացութիւն. ջրաբաժիններ: Օդ և մթնոլորտային երևոյթներ: Կլիմայական երևոյթներ: Բոյսեր և կենդանիներ, մարդ և մարդկային ցեղեր:

բ. Ասիա, Ա.Բրիկա, Ամերիկա եւ Աւստրալիա: Ֆիզիքական, քաղաքական, ազգապրական և քաղաքակրթական տեսութիւն: Աշխարհամասերի դիրք, սահման և տարածութիւն, մակերևոյթ, ջրաբաշխութիւն, կլիմայ, բուսականութիւն, կենդանիներ և հանքեր, ազգաբնակչութեան քանակութիւնը, խտութիւնը, ծագումը, կրօնը և քաղաքակրթական աստիճանը, զլխաւոր պարտպմունքները և արդիւնաբերութիւնը: Նշանաւոր տէրութիւններ. ֆիզիքական դրութիւնը (նշանաւոր լեռներ, դաշտեր, գետեր, լճեր, կլիման, բուսականութիւն, կենդանիներ և այլն). քաղաքական և վարչական կազմը և սահմանները, ազգաբնակչութեան կազմը, քաղաքակրթական աստիճանը և զլխաւոր պարտպմունքն ու արդիւնաբերութիւնը:

Ձեռնարկներ՝ «Բնդհանուր աշխարհագրութիւն» — փոխ. Ա. Արեղեանի, I և II մաս: Լ. Բաբայեան — «Աշխարհագրութիւն», I և II մաս:

5. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թուանիշների տեսակները (հայկական, արաբական և հռոմէական): Չորս գործողութիւն: Գործողութիւնների ստուգումը: Փակագծերի գործածութիւնը: Անուանական թուեր. ժամանակի, ծանրութեան, երկարութեան, հեղուկների, հաջահատիկների չափեր, զրաֆներ. մակերևոյթի և ծաւալի չափեր. մեարիկ չափեր: Վերածում և անդրադարձում: Չորս գործողութիւն անուանական թուերով:

Թուերի բաժանելիութիւն.

Պարզ և բարդ թուեր. բաժանելիութեան նշանացոյցներ: Թուերի վերլուծումը պարզ բազմապատկիչների. ամենամեծ ընդհանուր բաժանորար. ամենափոքր բազմապատկիչ:

Հասարակ կոսոսակներ.

Կոտորակի մեծանալու և փոքրանալու տայմանները. կրճատում. ընդհանուր յայտարարի բերելը. չորս գործողութիւն:

Տասնորդական կոսոսակներ.

Չորս գործողութիւն: Վերածում հասարակ կոտորակների և ընդհակառակը. Պարբերութիւն և նրա վերածումը հասարակ կոտորակի:

Ձեռնարկներ՝ Վարձելեան — «Թուաբանութեան կանոններ»: Չոհրաբեան — «Խնդրադիրք» I և II մաս: Պանճուլաղեան — «Խնդրադիրք»: Кнениевъ — Руководство по арифметикѣ.

6. ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պիմոք. հեղուկ և գազային մարմիններ, մարմնի կշիռը, տեսակարար կշիռը և խտութիւնը. ջերմութեան ազդեցութիւնը մարմինների վրայ. ջերմաչափ և նրա գործածութիւնը:

Օդը. նրա գոյութեան ապացոյցները, օդի ճնշումը, օդի բաղադրիչ մասերը, բորակածին, թթուածին, ածխածին, գոլորշի և փոշի: Ժանգ. այրուելը և շնչառութիւն. թթուածին:

Ջուրը և նրա երեք տեսակի գոյութիւնը. ջուրը բնութեան մէջ և նրա կատարած դերը. ջրի գոտումը և քաշելը. զուտ ջուր. ջրի բաղադրիչ մասերը. հանքային և տաք ջրեր: Զրածին:

Պարզ եւ բարդ մարմիններ. մետաղ և մեծաւակերպ. հող քարեր և հանքեր. աղ, կիր, կաւ, աւազ և աւազաքար. թերթաքար, գրանիտ, տրակիտ, քարածուխ, նաւթ, սևահող, դեղին, պղինձ, երկաթ, արճիճ, ոսկի, արծաթ, կլայեկ, ծծումբ:

Ներգրագնի կեղևի կրած փոփոխութիւնները: Օդի, ջրի, կենդանիների, բոյսերի, երկրաշարժի, հրաբուխի, լեռնակազմական ոյժերի ներգործութիւնը կեղևի վրայ. ներկրագնդի և իր կեղևի անցեալը:

Չեղնարկներ. Գիւղայեան — «Դասագիրք բնական պատմութեան»: Вагнеръ — Природовѣдѣніе ч. I. Шмейль — Начальное міровѣдѣніе ч. I.

Մանօրութիւն. Յայտարարած ժողովուրդները կարելի է փոխարինել այլ գրքերով՝ համապատասխան ծրագրի ծառային:

Ա. Զ. Դ.

Քննութիւններն սկսուելու են Օգոստոսի 25-ից:

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL011605

